

ological status of water of the Gavaraget River was evaluated. The colony forming units of aerobic chemoorganotrophic bacteria in studied water samples is varied from 5 (river head) to 1520 (down river up to estuary). Sanitary bacteriological indicators exceed accepted standards for river waters, which is indicated the presence of anthropogenic pollution in river ecosystem.

## **ԹԹՎԱՌՎՈՒՅՑԻ ՏԵՐԵՎՆԵՐՈՒՄ ՖՈՏՈՍԻՆԹԵԶԻ ԱՌԱՋԱՎՅԻՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՄՈՆԻԱԿՈՎ ԱԴՏՈՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

**Զ. Ս. ԲԱԿՎԵՅԱՆ**

Կենսաբանական գիտությունների դոկտոր,

ԵՊՀ պրոֆեսոր

**Վ. Ս. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ԵՊՀ մագիստրոս

**Տ. Վ. ՄԱՍԻԿՈՆՅԱՆ**

ԵՊՀ կրտսեր գիտական աշխատող

Ավտոտրոֆ օրգանիզմների կողմից կատարվող ֆոտոսինթեզը համարվում է բարդ և եղակի պրոցես, որն ապահովում է կյանքի հարատևությունը մեր մոլորակի վրա: Ֆոտոսինթեզի շնորհիվ ֆոտոսինթեզային ապարատում արեգակնային տեսանելի և մոտակա ինֆրակարմիր ճառագայթային էներգիայի օգտագործմամբ առաջանում են օրգանական մոլեկուլներ և մոլեկուլային թթվածին: Ֆոտոսինթեզի առաջնային ֆոտոֆիզիկական և ֆոտոքիմիական պրոցեսները ընթանում են ֆոտոսինթեզային ապարատի թիլակոիդային թաղանթներում: Վերջիններիս կառուցվածքն ու ֆունկցիան խստ զգայում են էկզոգեն և էնդոգեն գործոնների ազդեցության նկատմամբ: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի բույսերի ֆոտոսինթեզի առաջնային պրոցեսների կարգավորման մեխանիզմների պարզաբանումը մթնոլորտում ազոտ պարունակող թունավոր գազերով աղտոտման դեպքում: Նման հետազոտություններն ունեն տեսական և կիրառական նշանակություն: Դրա մասին վկայում է մեր կողմից հայտնաբերված հիավերքումային էֆեկտը (2), որը տեղի է ունենում ազոտ պարունակող գազերի ազդեցության հետևանքով: Բույսերի տերևների կլանման սպեկտրներում հիավերքումային էֆեկտի առաջացման ռեաքտում ֆոտոսինթեզի ֆոտոֆիզիկական և ֆոտոքիմիական պրոցեսների խաթարման հետևանքով տեղի է ունենում արեգակնային էներգիայի կենսակունվերսիայի խստ կասեցում: Նկատի ունենալով այդ երևույթը, մեր կողմից մշակված է օդային և ջրային ավազաններն ազոտ պարունակող նյութերով աղտոտվածության կենսաֆիզիկական լազերային մոնիթորինգի իրականացման մեթոդը(7):

**Աշխատանքի նպատակը** համարվել է անթոցիաններ պարունակող բույսի տերևների սպեկտրային հատկությունների և ֆոտոսինթեզի առաջնային պրո-

ցեսների ուսումնասիրությունը մթնոլորտային օդի նորմալ պայմաններում և փակ համակարգի օդը գազանման ամոնիակով աղտոտման նմանակման դեպքում:

**Յետազոտման օբյեկտները:** Մեր հետազոտություններում որպես օբյեկտ օգտագործել ենք թթվառվույտ (Oxalis triangularis) բույսի նորմալ և գազանման ամոնիակի ազդեցությանը ենթարկված տերևները: Այս բույսի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ներկայումս նրա տերևները լայնորեն օգտագործվում են առողջապահական նպատակներով: Մասնավորապես՝ ցինգայի, ստամոքսի, յարդի հիվանդությունների բուժման համար: Թթվառվույտի տերևների բուժական հատկությունները գլխավորապես պայմանավորված են քիմիական բաղադրությամբ: Տերևները պարունակում են հականեխիչ նյութեր (անթոցիաներ, թրնջկաթթու, խնձորաթթու, կիտրոնաթթու և այլն): Որպես ստուգիչ օբյեկտ օգտագործել ենք նաև էլողեիա բույսի տերևները:

**Յետազոտման մեթոդները:** Կիրառել ենք էլեկտրոնային սպեկտրոսկոպիայի և ֆլորեսցենտնան ինդուկցիայի մեթոդները: Տերևների կլանման սպեկտրների հետազոտման համար կիրառել ենք երկառագայթային սպեկտրալուսաչափ CPhi-10: Այն օժտված է Ուլտրահաստ սճամք գնդով և հնարավորություն է տալիս գրանցել լուսացրող օբյեկտների կլանման (5), բացքողման և անդրադարձման սպեկտրները՝ 400-750 նմ տիրույթում:

Ցուցադրության մեջ նշենք կայուն պայմանավորված համագործակցությունը թթվառվույտի և ֆոտոհամակարգերի միջև էներգիայի տեղափոխման ուսումնասիրման համար օգտագործել ենք մեր կողմից ստեղծված ունիվերսալ ֆլուորամետր-ֆունդումետրականական պարագաներ(6):

### ՅԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

#### 1. Թթվառվույտի տերևների կլանման էլեկտրոնային սպեկտրների հետազոտումը


Աշխատանքի այս բաժնում կատարել ենք էլողեիա բույսի կամաց տերևների և թթվառվույտի անթոցիան պարունակող կարմրավուն տերևների կլանման սպեկտրների համեմատական ուսումնասիրություն: Յետազոտության արդյունքների համաձայն այս բույսերի տերևների կլանման սպեկտրները խիստ տարբերվում են թթվառվույտի անթոցիան պարունակող կլանման շերտերի մաքսիմումների ալիքի երկարություններով և լուսականման ինտենսիվությամբ: Այդ պայմանավորված է նրանով, որ այդ երկու բույսերի քլորոպլաստներում պիզոնան ֆիզիկական վիճակները տարբեր են: Այսպես, օրինակ, էլողեիայի տերևներում քլորոֆիլ ա-ի կլանման շերտերն ունեն 435նմ և 680նմ ալիքի երկարությամբ մաքսիմումներ, իսկ քլորոֆիլ բ-ի կլանման շերտերն ունեն 480նմ և 650նմ մաքսիմումներ: Սակայն թթվառվույտի տերևներում քլորոֆիլ ա-ի համապատասխան կլանման շերտերը ունեն 426նմ և 640նմ մաքսիմումներ: Քլորոֆիլ բ-ի կլանման շերտերն ունեն 476նմ և 640նմ ալիքի երկարությամբ մաքսիմումներ: Թթվառվույտի տերևների կլանման շերտերի մաքսիմումներն են 512նմ, 540նմ, 608նմ ալիքի երկարությունները: Նշված մաքսիմումների ալիքի երկարությունները վկայում են այն մասին, որ թթվառվույտին բնորոշ են քլորոֆիլի մոլեկուլների ավելի կարծալիքային մաքսիմումներ: Այդ կարելի է բացատրել կանաչ և անթոցիաներ պարունակող բույսերի քլորոֆիլի մոլեկուլների ֆիզիկա-

կան վիճակների տարբերությամբ՝ թիլակոիդային թաղանթներում:

Նշված բույսերի տերևների սպեկտրային հատկությունների գնահատման համար կարևոր նշանակություն ունի նաև կարճալիքային և երկարալիքային գլխավոր մաքսիմումների օպտիկական խտությունների հարաբերությունների արժեքների համեմատումը: Դամաձայն լուսակլանման շերտերի վերածածկման կանոնի, նույն ալիքի երկարություններում տարբեր մոլեկուլների կողմից ցուցաբերված օպտիկական խտությունները գումարվում են: Այդպիսի երևույթ տեղի է ունենում նաև թթվառվույտի տերևների կլանման սպեկտրներում: Այսպես, օրինակ, էլողեիա բույսի տերևներում ջլորոֆիլ ա-ի կլանման կարծ ալիքային մաքսիմումի և երկար ալիքային մաքսիմումի օպտիկական խտությունների հարաբերությունը ունի 1,36 արժեք, իսկ թթվառվույտի տերևների սպեկտրների այդ հարաբերությունը ունի 2.39 արժեք: Դետևաբար անթոցիան պարունակող տերևներում այդ հարաբերությունը շուրջ 75.7% -ով մեծ է, քան կանաչ տերևներինը: Այստեղից կարելի է ասել, որ թթվառվույտի տերևների ջլորոֆիլի մոլեկուլների կլանման շերտի մաքսիմումի հնտենսիվությունները պայմանավորված են նաև անթոցիաների կլանման շերտերի ներդրումով:

## 2. Թթվառվույտի տերևների կլանման սպեկտրների վրա գազանման ամոնիակի ազդեցության հետազոտումը

Աշխատանքի այս բաժնում ուսումնասիրել ենք թթվառվույտի տերևների նույն նմուշների կլանման սպեկտրները մթնոլորտային օդի նորմալ պայմաններում և օդը գազանման ամոնիակով աղտոտման դեպքում: Դետազոտման արդյունքները բերված են նկ. 1-ում:



**Նկ. 1.** *Oxalis triangularis* բույսի տերևների կլանման սպեկտրները.

1. սոուզիչ,

2. գազանման ամոնիակով  $1,3\text{մգ}/\text{մ}^3$  ազդեցության ենթարկված  $10\text{ր.}$ ,

3. նույն կոնցենտրացիայով  $20\text{ր.}$  ազդեցության ենթարկված:


Կլանման սպեկտրներից երևում է, որ գազանման ամոնիակի  $1,3\text{մգ}/\text{մ}^3$  կոնցենտրացիայով 10 րոպե ազդելուց հետո նույն նմուշի կլանման սպեկտրում (1) առաջանում են օգալի փոփոխություններ (2): Կլանման սպեկտրի 400-500նմ տիրույթի կլանման շերտը շեղվում է երկար ալիքների կողմը և մաքսիմումներում դիտվում է օպտիկական խտությունների բարձրացում՝  $440\text{նմ}$ - $28,6\%$ , իսկ  $476\text{նմ}$ -ում  $74\%$ : Նման աճ դիտվում է երկար ալիքային մաքսիմումների մոտ՝  $608\text{նմ}$ -ում  $19,4\%$ , իսկ  $670\text{նմ}$ -ում շուրջ  $45\%$ : Ի տարբերություն սրանց,  $540\text{նմ}$ -ում օպտիկական խտությունը նվազում է  $13\%-ով$ : Պետք է նշել, որ նշված սպեկտրային փոփոխությունները գլխավորապես պայմանավորված են տերևների անթրոցիանային մոլեկուլների քիմիական ծևափոխմանը:

Թթվառվույտի տերևները գազանման ամոնիակի նույն կոնցենտրացիայով 20ր. ազդելուց հետո կլանման սպեկտրի 400-500նմ տիրույթում առաջացող կլանման շերտը շեղվում է երկար ալիքների կողմը: Միաժամանակ դիտվում են մաքսիմումում օպտիկական խտության աճ շուրջ  $32,6\%-ով$ : Կարևոր է նշել, որ լուսականման այդպիսի աճը պայմանավորված է ֆենոլային և անթրոցիանային մոլեկուլների կողմից առաջացրած հիպերբրոնային էֆեկտների վերադրմամբ: Նման տեսակետի ծշտության մասին է վկայում այն փաստը, որ անթրոցիաների կլանման սպեկտրի տիրություն ( $500$ - $670\text{նմ}$ ) գազանման ամոնիակը 20ր ազդեցության դեպքում առաջանում են երկու կլանման շերտեր, որոնց մաքսիմումների ալիքի երկարություններն են  $572\text{նմ}$  և  $615\text{նմ}$ , որոնք ունեն  $77\%$  և  $56,7\%$  օպտիկական խտության աճ ստուգիչ նկատմամբ:

Նման լուսականման երևույթը պայմանավորված է անթրոցիաների մոլեկուլների քիմիական և ֆիզիկական ծևափոխություններով, որոնք թթվառվույտի տերևներում առաջացնում են ուժեղ հիպերբրոնային էֆեկտ: Անհրաժեշտ է նշել, որ այսպիսի հիպերբրոնային էֆեկտի առաջացումն ուղեկցվում է տերևների որոշ հատվածների նոր գույների առաջացմամբ:

### **3. Թթվառվույտի տերևների քլորոպլաստներում էլեկտրոնների տեղափոխության վրա ամոնիակի ազդեցության հետազոտումը**

Սույն բաժնում ուսումնասիրել ենք գազանման ամոնիակի ազդեցությունը տերևներում թիլակոիդային թաղանթների քլորոֆիլ ա-ի ֆլուորեսցենտման ինտենսիվության արագ և դանդաղ անցումների (ինդուկցիայի) վրա: Ներկայումս հայտնի է, որ ֆոտոսինթեզի մեխանիզմները հետազոտող տարբեր լաբորատորիաներում ֆլուորեսցենտման ինդուկցիայի երևույթը լայնորեն կիրառում են թիլակոիդային թաղանթների էլեկտրոնտրանսպորտային շղթայի (ԷՏԸ) աշխատանքի վիճակի գնահատման համար: Դա պայմանավորված է նրանով, որ քլորոֆիլ ա-ի ֆլուորեսցենտման կինետիկ կորի մաքսիմումներն ու մինիմումները լավ արտացոլում են ԷՏԸ-ի որոշակի թաղադրամասերի միջև էլեկտրոնների տեղափոխման պրոցեսի արդյունավետությունը: Ընդ որում, ներկայում կինետիկ կորի մաքսիմումներն ու մինիմումները ընդունված է արտահայտել *OIDPSMT* նշանակումներով: Այս մեթոդով մենք ուսումնասիրել ենք (*Oxalis triangularis*) բույսի տերևներում ֆոտոսինթեզային ապարատի թիլակոիդային թաղանթներում էլեկտրոնների տեղափոխությունը գազանման ամոնիակով ազդելուց առաջ և հետո: Ուսումնասիրությունների արդյունքները բերված են նկ. 2-ում:



**Ակ. 2.** Թթվառվլյուսի տերևներում քլորոֆիլ ա-ի ֆլուորեսցենտման ինդուկցիան գազանման ամոնիակի ազդեցությունից առաջ և հետո.

1. ստուգիչ տերևների,
2. գազանման ամոնիակով  $1,3 \text{մգ}/\text{dm}^3$  ազդեցության ենթարկված 10ր.,
3. նույն կոնցենտրացիայով 20ր. ազդեցության ենթարկված:

Նկարում բերված 1-ին կինետիկ կորը վերաբերվում է ստուգիչ տերևներին: Ինչպես երևում է՝ դրանց ֆլուորեսցենտման կորը բաղկացած է ինդուկցիայի արագ (OID) և դանդաղ (D,P,S,M1, M2 և T) փոփոխվող մաքսիմումներից և մի-միմումներից: Կինետիկ կորի այսպիսի մաքսիմումները և միմիմումները բնորոշ են կանաչ տերևներ ունեցող բույսերին, սակայն դրանց մոտ բացակայում է M2 անցման մաքսիմումը:

Գազանման ամոնիակի ազդեցությունը հետազոտելու համար ստուգիչ տերևները տեղադրել ենք  $1,3 \text{ mg}/\text{dm}^3 \text{ NH}_3$  պարունակող ամորթի մեջ 10 րոպե: Նկարում բերված 2-րդ կորից երևում է, որ նույն նմուշի ֆլուորեսցենտման կինետիկ կորը ենթարկվում է զգալի փոփոխության: Ընդ որում՝ կինետիկ կորի դանդաղ ֆլուորեսցենտման ինտենսիվությունը P մաքսիմումում նկատելի աճում է: Միաժամանակ կինետիկ կորի M1 և M2 մաքսիմումները անհայտանում են, սակայն զգալի փոփոխության չեն ենթարկվում OID արագ անցումները: Գազանման ամոնիակով 20 րոպե ազդելու դեպքում կինետիկ կորում (3) բոլոր դանդաղ անցումները անհայտանում են: Այս դեպքում արագ (OID) անցումը նորից ցուցաբերում է որոշ կայունություն: Գազանման ամոնիակի ազդեցության դեպքում մեր կողմից հետազոտված բույսի տերևներում քլորոֆիլ ա-ի ֆլուորեսցենտման կինետիկ կորերում առաջացած փոփոխությունները կարելի է բացատրել հետևյալ կերպ: Դամաձայն Շյուլգենս-Սվարսի կոնցենտրացիայի (1963)(1) D-P անցման մաքսիմումի ամպլիտուդայի զգալի մեծացումը 10ր ազդեցության դեպքում պայմանավորված է ESR-ի քինոն QA-ի վերականգնման պրոցեսի փոքր փոփոխությամբ, որը բերում է P-S անցման նվազում, իսկ 20ր. ազդեցության դեպքում

այն լրիվ անհայտանում է, որը պայմանավորված է պրոտեինկինազա և պրոտեին ֆուֆատազա ֆերմենտների ակտիվության կորստով, իսկ երկարատև ազդեցության դեպքում դրանք լրիվ ինակտիվանում են: Դրա հետևանքով խաթարվում է էլեկտրոնային գրգռվածության էներգիայի տեղափոխությունը ՖՀ2-ից ՖՀ1-ին, այսինքն՝ տեղի է ունենում էլեկտրոնի տեղափոխության արգելակում ըստ “սպիլովերի” մեխանիզմի:

Գազաննան ամոնիակի նկատմամբ ավելի կայուն է ֆլուորեսցենտման OID արագ անցման I մաքսիմումը, որը պայմանավորված է ֆոտոհանակարգ 2-ի L-կենտրոնով: Գազաննան ամոնիակի ազդեցության դեպքում S-M անցման և M1 և M2 մաքսիմումների անհայտացումը վկայում է թիլակոիդային թաղանթի վրա էլեկտրաքիմիական գրադիենտի առաջացման պրոցեսի խաթարման նասին: Վերը նշված պրոցեսների խաթարումից բացի, գազաննան ամոնիակը առաջացնում է ֆոտոսինթեզի մթնային փուլի ռեակցիաների արգելակում, որի նասին վկայում է M-T անցման T մաքսիմում անհայտացումը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Гаврленко В. Ф., Жигалова Т. В.** Большой практикум по фотосинтезу, М., 2003, 254с.
2. **Джарвшиан Дж. М.** Первичные процессы фотосинтеза растений при загрязнении атмосферы и перспективы биофизического мониторинга. Автореф. дис. на соискание уч. степ. доктора биол. наук., Минск, 1991.
3. **Джарвшиан Дж. М., Тихонов А. Н.** Биолог, ж. Армении, 1982, Т. XXXV N 5, стр. 335-339.
4. **Джарвшиан Дж. М.** Первичные процессы фотосинтеза при загрязнении атмосферы и перспективы применения "гиперхромного эффекта" для решения аграрных и экологических проблем. Мат. междунар. науч. конференции. Междунар. науч. журнал "Известия" 3 (19), 2007 ст. 24-28.
5. **Рвачев В. П.** Методы оптики светорассеивающих сред в физике и биологии. Минск. Изд. БГУ, 1978г.
6. **ճառվշյան Զ. Ս.** Ֆոտոկենսարանություն, կենսաֆիզիկական ֆոտոմետրիա, կենսասպեկտոսկոպիա: Երևան, 2006:
7. **ճառվշյան Զ. Ս.** Ֆոտոկենսարանություն և կենսասպեկտորասկոպիա: Հատոր 1, Երևան, 2008, 175 էջ:

#### ИССЛЕДОВАНИЕ ПЕРВИЧНЫХ ПРОЦЕССОВ ФОТОСИНТЕЗА В ЛИСТЬЯХ КИСЛИЦЫ В СЛУЧАЕ ЗАГРЯЗНЕНИЯ АТМОСФЕРНОГО ВОЗДУХА АММОНИЕМ

**Дж. М. Джарвшиан  
В. А. Багдасарян  
Т. В. Мамиконян**

В работе исследованы спектральные особенности листьев кислицы (*Oxalis triangularis*), содержащие антоцианы, и первичные процессы фотосинтеза в нормальных условиях атмосферного воздуха и в случае имитации воздуха газообразным аммонием в закрытой системе.

Выяснилось, что аммоний образует особые нарушения фотосинтеза. В результате формирования молекул фенолов и антоцианов возникают гиперхромный эффект и резкое приостановление переноса электронов в тилакоидных оболочках.

**RESEARCH OF PRIMARY PROCESSES OF PHOTOSYNTHESIS IN OXALIS TRIANGULARIS LEAVES IN CASE OF ATMOSPHERE AIR POLLUTION WITH AMMONIUM**

*J. M. Jaryshyan  
V. A. Bagdasaryan  
T.V. Mamikonyan*

The spectral peculiarities of the oxalis triangularis leaves, containing anthocyanins, and the primary processes of photosynthesis under the normal conditions of the atmosphere air and in case of air imitation with gaseous ammonium in the close system have been studied in the work.

It turned out that ammonium forms special disorders of photosynthesis. The hyper-chrome effect and sharp cessation of the movement of electrons in tilakoid coats appear as a result of the formation of phenol and anthocyanins molecules.

**ՍՊԻՏԱԿ ՕՄԵԼԱՅԻ (ճԱԳՈՄԻ) (Viscum album L.)  
ԸՆՉՅՈՒՂՆԵՐԻՑ ԵՎ ԵՂԵՐԴԱԿԻ (Cichorium intybus L.)  
ԱՐՄԱՏՆԵՐԻՑ ԱՏԱՑՎԱԾ ԶՐԱՅԻՆ ՄԶՎԱԾՔՆԵՐԻ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԿՐՈՕՐԳԱՆԻՉՄԱՆԵՐԻ ԱՃԻ ՎՐԱ**

**Ե. Գ. ԲԱՐԴԱՐՅԱՆ**

Կենսաբանական գիտությունների դոկտոր,

Գորիսի պետական համալսարանի

Կենսաբանության ամբիոնի պրոֆեսոր

**Ս. Ա. ԴԱՅՐԱՄԵՏՅԱՆ**

Գորիսի պետական համալսարանի մանկավարժական-

բնագիտական ֆակուլտետի փոխուժեկան

**Ա. Ե. ԲԱՐԴԱՐՅԱՆ**

Գորիսի պետական համալսարանի գիտաշխատող

Դեղաբույսերը հումք են հանդիսանում բազմաթիվ դեղորայքային պատրաստումների ստացման համար: Դրանց կազմում առկա երերայուղերը, ֆիտոնցիդները, ֆլավոնիդները, գլիկոզիդները, օրգանական թթուները, դարադանյութերը, վիտամինները պայմանավորում են դրանց բուժական հատկությունները: Սակայն, եթե դեղաբույսերի մեծ մասի քիմիական կազմն արդեն հայտնի է, ապա դրանց հակաբակտերիական, բակտերիոցիդ ազդեցությունը դեռևս ամբողջովին պարզաբանված չէ [1, 2, 3]:

Մեր աշխատանքում ներկայացվել է Գորիսի շրջանի Տաթևի և Ջալիձորի անտառների ծառերի (կաղնու, սալորենու, տանձենու) վրա կիսամակարույժ կյանք վարող սպիտակ օմելայի (*Viscum album L.*) վեգետատիվ օրգաններից ստացված ջրային մզվածքների և եղերդակի (*Cichorium intybus L.*) արմատներից ստացված ջրային մզվածքի ազդեցությունը հացահատիկային մշակաբույսերի